ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
(ԱԻ)

ԲԱՀՐԱՄ ԱԼ-ԱՐՄԱՆԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 1135-1140ԹԹ.

8-րդ դարի վերջին Աբբասյան հզոր խալիֆայության թուլացումը հանգեցրեց նրանում անկախ վարչական միավորների առաջացման: Այդպիսի միավորներից էր Ֆաթիմյան խալիֆայությունը, որն իր կարևորագույն տեղն է գրաղեցնում արաբական պատմության մեջ: Ֆաթիմյան խալիֆայության (909-1171թթ.)[1] պատմության հետ սերտորեն փոխկապակցված են մի շարք հայորդիների անուններ, որոնք տնական ժամանակաշրջան բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցրել խալիֆայության վարչակարգում:

Ֆաթիմյան խալիֆայության հայազգի վեզիրներից էին Բադր ալ-Գամալին, Մալիք ալ-Աֆդալը, Վահրամ Պահլավունին և այլոք, որոնց անունների հետ են կապված պետականության պահպանման, ներքին հակամարտությունների, ճգնաժամերի հաղթահարման և այլ պատմական նշանակալից դրվագներ:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Վահրամ Պահլավունու կամ Բահրամ ալ-Արմանիի կյանքը և գործունեությունը:

Ընդհանուր առմամբ արաբ պատմագրությունը, Ֆաթիմյան խալիֆայության վեզիր Վահրամ Պահլավունու մասին հաղորդում է հարուստ տեղեկություններ, որոնք սակայն չէն ներառում նրա գործունեության սկզբնական փուլը:

Վահրամ Պահլավունին Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսի քեռորդին էր և Ներսես Շնորհալու հորեղբայրը: Նրա ծննդյան տարեթվի մասին հստակ տեղեկություններ հայտնի չեն: Նա ծնվել է Այնթափի մոտակայքում Թլբաշար կամ Թել Բաշիր կոչված քաղաքում և ունեցել է երեք եղբայր՝ Ապիրատ, Վասակ և Գրիգորիս: 1075թ. Գրիգոր Բ. Վկայասեր կաթողիկոսն այցելում է Եգիպտոս և հաջորդ տարի Եգիպտոսի հայ համայնքի արքեպիսկոպոս է ձեռնադրում իր քեռորդի Գրիգորիսին[2]:

Կաթողիկոս Գրիգոր Բ. Վկայասերի կարգադրությամբ Վահրամ Պահլավունին իր հետևյալների հետ Եգիպտոսում է հաստատվում և մտնում է պետական ծառայության՝ ցուցաբերելով մարտական և վարչական նշանակալից կարողություններ: Արդյունքում նա նշանակվում է Ղարբիեի (Գուսի)[3] նահանգապետ[4]:

Վահրամ Պահլավունու՝ Եգիպտոսում հաստատվելու ճշգրիտ թվականը հայտնի չէ, սակայն կարելի է ենթադրել, որ այն թվագրվում է Գրիգորիսի պաշտոնավարության շրջանին, երբ Եգիպտոսի վեզիրը Բադր ալ-Գամալին էր[5]:

1135թ. օգտվելով երկրում տիրող խառնաշփոթից և խալիֆ Հաֆեզի իշխանության թուլությունից՝ Վահրամ Պահլավունին հայերից բաղկացած զորքով պաշարեց Կահիրեն և նշանակվեց վեզիր[6]: Խալիֆ Հաֆեզը Վահրամ Պահլավունուն նշանակեց վեզիր և վեզիրի զգեստ (խիլա) հագցրեց՝ չնայած նրան, որ վերջինս քրիստոնյա էր և մզկիթ մտնելու իրավունք չուներ[7]:

Վեզիրի պաշտոնում հաստատվելուց հետո Վահրամը թույլտվություն խնդրեց խալիֆ Հաֆեզից և Եգիպտոս բերեց իր ելբայրներին և ազգականներին[8]: Թել Բաշիրից և Կիլիկյան Հայաստանից Եգիպտոս ներգաղթեց շուրջ 30 հազար հայ[9]:

Հետաքրքրական է, որ Վահրամ Պահլավունին կարող էր ընդունել իսլամ, ինչի արդյունքում նրա հնարավորությունները կարող էին ընդլայնվել, սակայն նա նախընտրեց մնալ ջերմեռանդ քրիստոնյա[10]: Վահրամ Պահլավունու իշխանության ընթացքում կառուցվում են բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ, և Եգիպտոսի բնակչությունը որոշակիորեն երկյուղում են, որ հայերը կայտղ են սպառնալիք դառնալ իրենց համար[11]:

Ընդհանուր առմամբ իշխանության եկած հայազգի վեզիրին հաջողվում է ճնշել կենտրոնախույս ուժերին և կարգ ու կանոն հաստատել երկրում[12]:

Խալիֆայությունում հայերի իշխանության ամրապնդումն առաջացրեց տեղաբնիկների դժգոհությունը, որը և անհետևանք չմնաց. 1137թ. էմիրները դիմեցին Ղարբիեի կառավարիչ Ռադուան Ուալուսխչիին՝ խնդրելով վերջինիս աջակցել իրենց հայազգի վեզիրի իշխանությունից ազատվելու գործում[13]:

Ռադուանը 30 հազարանոց բանակով արշավեց Կահիրե՝ նպատակ ունենալով գրավել վազիրի պաշտոնը, սակայն հանդիպեց Վահրամ Պահլավունու գլխավորած բանակին[14]:

Ճակատամարտից առաջ Ռադուանի գլխավորած զինվորներն իրենց սրերի վրա Ղուրանի էջեր են փակցնում, որը և ստիպում է Վահրամի իսլամադավան զորքին հրաժարվել Ղուրանի դեմ կռվելուց[15]:

Վահրամը մի շարք հավատարիմ համախոհների հետ փախուստի է դիմում և ապաստան գտնում Դամասկոսի մոտակայքում, սակայն շատ շուտով, խալիֆից հատուկ թույլտվություն ունենալով, վերադառնում է Եգիպտոս և հաստատվում Վերին Եգիպտոսի Ասուանի շրջակայքում հայերին պատկանող Դայր ալ-Աբյադ (Սպիտակ Վանք) կոչվող վայրում [16]:

Ռադուան Ուալախչին. գրավելով վազիրի պաշտոնը. անմիջապես ձեռնամուխ եղավ հայերին իշխանությունից զրկելու և ճնշումների քաղաքականությանը, որի հետեւանքով Կահիրեի հյուսիսի հայաբնակ թաղամասի բնակիչները սպանվեցին, հայերին պատկանող գույքը կողոպտվեց, եկեղեցիները և վանքերն ավերվեցին, սպանվեցին Վահրամ Պահլավունու եղբայր Վասակը և Առաջնորդ Անանիան, ինչպես նաև քանդվեց Գրիգորիս արքեպիսկոսի գերեզմանը[17]:

Ըստ Իբն Մույասսարի Գուսի նահանգում սպանվում է Վահրամի եղբայր Վասակը, որի սպանությունից երկու օր անց Վահրամն իր ընտանիքի և զորքի ուղեկցությամբ Ապիտակ Վանքի ճանապարհին հասնում է Գուս, ավերում է քաղաքը, սպանում բազմաթիվ բնակիչների և հետո միայն հաստատվում Դայր ալ-Աբյադում:

1137թ. վազիրի պաշտոնում հաստատվելուց անմիջապես հետո Ռադուան Ուալախչին իր եղբոր՝ Նասրեդդինի գլխավորությամբ զորք ուղարկեց Վահրամի դեմ, սակայն ճակատամարտ տեղի չունեցավ, համաձայնություն ձեռք բերվեց, որ Վահրամը կմնա Սպիտակ Վանքում և իր զորքին բաց կթողնի, որպեսզի վերջիններս վերադառնան հայրենիք[18]:

Սակայն շուտով խալիֆ Հաֆեզը, զգալով սաստկացող խժդժությունները ու անկարգությունները երկրում, 1138թ. Վահրամին հրավիրեց իր պալատ, և վերջինս մնաց այստեղ մինչեւ իր մահը[19]:

Վահրամի պալատում հաստատվելը խարխլեց Ռադուանի հեղինակությունը և նպաստեց վերջինիս փախուստին Կահիրեից:

Ռադուան Ռուալախչիի և Վահրամ Պահլավունու հակամարտությունն ավարտվեց 1140թ. վերջինիս մահով:

Փաստորեն. Վահրամ Պահլավունին, իր կյանքի վերջին տարիներն ապրելով պալատում, վարում էր երկրի գործերը, խորհուրդներ էր տալիս խալիֆին, սակայն պաշտոն չէր ստանձնում, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված էր խալիֆի՝ այլեւս այլակրոն վազիր և այրա հետ կապված խնդիրներ չունենալու ցանկությամբ:

Ըստ Իբն Սայյասսարի՝ Վահրամի մահվան կապակցությամբ խալիֆ Հաֆեզը երեք օր սուգ հայտարարեց, կանչեց հայոց պատրիարքին և կազմակերպեց խուղարկավորության արարողությունը:

Կեսօրին Վահրամի սուճյունը հանվեց պալատից նկարազարդ սավանով պատված դագալի մեջ՝ շրջապատված քրիստոնյա քահանաներով:

Թավտրն ուղեկցում էին հետիոտն շերիֆներ (Մարգարեից սերող ազնվականներ), բարձրաստիճան այրեր:

Հուղարկավորությանը անձամբ մասնակցում էր խալիֆ Հաֆեզը՝ ջորի հեծած, որը, հասնելով գերեզման (Դայր ալ-Խանդակ) նստեց եզրին և սաստիկ հուզվեց[20]:

Այսպիսով, Վահրամ Պահլավունին, ապրելով իր գործունեությունը ծավալելով Եգիպտոսում, Ֆաթիմյան խալիֆայության պատմության մեջ իր անջնջելի հետքն է թողել: Նրան հաջողվեց կարճ ժամանակամիջոցում երկրում կարգ ու կանոն հաստատել, ճնշել դավադիր ուժերին իրապես վայելել խալիֆ Հաֆեզի հարգանքն ու սերը, ինչի մասին միանշանակ խոսում է թաղման արարողության նկարագրությունը Վահրամ Պահլավունու խալիֆի պալատում բնակվելու փաստը:

ARSEN ARAKELYAN
(IOS)

BAHRAM AL-ARMANI'S ACTIVITY IN EGYPT (1135-1140)

In the end of 8-th century Abbasid Caliphate was divided into several independent states and one of them was Fatimid Caliphate. The history of Fatimid Caliphate states, that there were several Armenian Wazirs (head of Government), like Badr al-Gamali, Malik al-Afdal, Vahram Pahlavuni etc.

Vahram Pahlavuni has been one of the key persons in the history of Government of Fatimid Caliphate.

Caliph Hafez had nearly lost his power and he appointed Vahram in the position of Wazir. This appointment was really useful: Vahram centralized and raised Caliphate's power, crushed Caliph's enemies. Vahram brought about 30 thousand Armenians to Egypt. During the two year period of Vahram's service as Wazir many churches and monasteries had been constructed in Egypt.

He lived and died in Caliph's palace.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն հ., I, Եր., 2001, էջ 385:
2. Մըսրլեան Գ., Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 64-65:
3. Թուրշյան Հ., 11-րդ եւ 12-րդ դարերի Եգիպտահայ գաղութի պատմությունից, Արեւելագիտության ժողովածու, հ. 2, Եր., 1964, էջ 310:
4. Զէյթլեան Ս., Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մեջ, Կվեբեկ, Կանադա, 2004, էջ 39:
5. Մըսրլեան Գ., նույն տեղում, էջ 65:
6. Ալպոյաճեան Ար., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը, Գահիրէ, 1960, էջ 28:
7. Թուրշյան Հ., նույն տեղում, էջ 310:
8. Իբն Մույասսար, տե՛ս Семенова, Л.А. Из фатимидского Египта, М., 1974, с. 181.
9. Իբն Մույասսար, տե՛ս Մըսրլեան Գէորգ, Ականաւոր Հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ 1947թ. էջ 69:
10. Սուֆեան Յ., Եգիպտոսի հայ մեմլուքներն ու իշխանները ֆաթիմեան շրջանին, Գահիրե 1928թ., էջ 47:
11. Семенова Л.А., Из фатимидского Египта, М., 1974, с. 181.
12. Սուֆեան Յ., նույն տեղում, էջ 47:
13. Մըսրլեան Գ., նույն տեղում, էջ 70:
14. Ալպոյաճեան Ար., նույն տեղում, էջ 31:
15. Զէյթլեան Ս., նույն տեղում, էջ 41:
16. Մըսրլեան Գ., նույն տեղում, էջ 72:
17. Զեյթլեան Ս., նույն տեղում, էջ 41:
18. Մըսրլեան Գ., նույն տեղում, էջ 72:
19. Զեյթլեան Ս., նույն տեղում, էջ 41:
20. Իբն Մույասսար, տե՛ս Մըսրլեան Գ., Ականաւոր Հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ 1947թ. էջ 74: